ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «12» դեկտեմբերի 2024թ № 2953-Ա

«ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-Ի ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ (ՕԲՅԵԿՏԻ) ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 20-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը՝

հրամայում եմ.

1. «Ավտոտրանսպորտային միջոցների հետազոտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձարկման լաբորատորիային նշանակել որպես համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին՝ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 877 որոշմամբ ընդունված «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» Մաքսային Միության տեխնիկական կանոնակարգով (ՄՄ ՏԿ 018/2011)՝ համաձայն հավատարմագրման վկայագրի (հավատարմագրման գրանցահամար՝ N 081/Т-136) N 1 և

N 2 հավելվածներով սահմանված հավատարմագրման ոլորտում ընդգրկված արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի, ցուցանիշների և համապատասխան տեխնիկական կանոնակարգերով սահմանված փորձարկման (այդ թվում՝ նմուշառման) մեթոդը սահմանող փաստաթղթերի նշագրերի:

2. «Ավտոտրանսպորտային միջոցների հետազոտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձարկման լաբորատորիային համապատասխանության գնահատման մարմին նշանակել մինչև «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրված հավատարմագրման վկայագրի գործողության ժամկետի ավարտը (2028 թվականի հոկտեմբերի 11), շնորհել նշանակման վկայական և նույնականացնող համար՝ Ն-52 (H-52) 2024:

3. «Ավտոտրանսպորտային միջոցների հետազոտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձարկման լաբորատորիային գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի N 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

4. Հանձնարարել՝ «Ավտոտրանսպորտային միջոցների հետազոտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձարկման լաբորատորիային նշանակման ողջ ժամանակահատվածում ապահովել գործող պատասխանատվության ապահովագրության պայմանագրի առկայությունը:

5. Սույն հրամանի նկատմամբ կատարման հսկողությունը վերապահել համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

2024-12-18 22:09:22 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ